Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն

որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) մեկնարկած պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 4 հասցեի N 237 բնակարանի և N 237 ավտոկայանատեղիի շահառու՝ Արման Գոռի Մարգարյանը սույն թվականի նոյեմբերի 18-ին դիմում է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրով իր ունեցած իրավունքը պահանջի իրավունքի զիջման հատուցելի գործարքով երրորդ անձի փոխանցելու վերաբերյալ:

Անշարժ գույքի նկարագիրը և իրավունքի օտարման գինն ու պայմանները՝ համաձայն Որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 9-րդ ենթակետի բ) պարբերության

1. Անշարժ գույքի հասցեն	**Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ադոնցի փողոցի 4 (չորս)** հասցեում գտնվող «Միկշին» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական **26032019-01-0229**) վրա կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի թիվ **7 (յոթ)** մասնաշենքի (Երևանի քաղաքապետի կողմից **07.05.2018թ.** համաձայնեցված թիվ **01/18-05/1-Գ-1696-371** կառուցման նախագիծ, **07.05.2018թ.** թիվ **01/18-Գ-1696-440** շինարարության թույլտվություն) **7-րդ հարկի, 118,77 քառ.մետր** մակերեսով նախագծային թիվ **237 (երկու հարյուր երեսունյոթ)** բնակարան (հատակագիծը կցվում է), այսուհետ՝ Բնակարան, և նախագծային համար **237 (երկու հարյուր երեսունյոթ)** ավտոկայանատեղի, միասին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույք, առանձին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույքի միավոր
2. Անշարժ գույքի վիճակը	ներքին հարդարմամբ՝ Որոշմամբ հաստատված պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի կարգի հավելվածով նախատեսված բնութագրերին համապատասխան
3. Իրավունքի օտարման գինը՝ ըստ շահառուի առաջարկի	**89 930 000 (ութսունինը միլիոն ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը
4. Վճարման պայմաններ	անկանխիկ եղանակով փոխանցման միջոցով՝ առանց հիփոթեքային վարկավորման կամ գործող հիփոթեքային պայմանագրի պարտավորությունների ստանձնման

Սույն հայտարարության հրապարակումից մինչև օրացուցային 14-րդ օրը ներառյալ հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողները կարող են սույն կարգի համաձայն հայտ ներկայացնել օտարվող գույքային իրավունքն օտարողի դիմումում առաջարկված գնով և վճարման պայմաններով ձեռքբերման համար: Մեկից ավելի հայտերի դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն օրացուցային 7-օրյա ժամկետում կազմակերպում է վիճակահանություն: Նախնական պայմանագրից ծագած իրավունքները երրորդ անձին օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախնական համաձայնություն հայցած շահառուին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն ներկայացնում է օտարման համաձայնություն մեկ հավակնորդի դեպքում՝ միակ հավակնորդին, իսկ մեկից ավելի հավակնորդների դեպքում՝ վիճակահանության արդյունքներով որոշված հավակնորդին օտարելու մասին:

Սույն ծրագրի շրջանակներում հավակնորդ են համարվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N 111-Ա հրամանի առաջին կետով հաստատված հավելվածում ընդգրկված այն ծառայողները, ովքեր Որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի համաձայն ինքնաբերաբար հանված չեն հավակնորդների ցուցակից:

Ընդ որում, սույն ծրագրի շրջանակներում հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողի կողմից մասնակցության հայտը ներկայացվում է վերջինիս գործատուի միջոցով՝ հաստատելով, որ տվյալ հավակնորդի զբաղեցրած պաշտոնը համապատասխանում է Որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հեռախոս՝ 011621714, 011621776
Էլ.փոստ՝ petbnakaran@minurban.am

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ 237
ՏԻՊ 34
ՄԱՍՆԱՇԵՆՔ 7
ՄՈՒՏՔ 10
ՀԱՐԿ 7
ԲՆԱԿԱՐԱՆ 237
ՄԱԿԵՐԵՍ 118.77 ՔՄ





ԲՆԱԿԱՐԱՆ ՏԻՊ 34 118.77 մ^2		
1	Հոլլ	20.61 մ^2
2	Ընդհանուր սենյակ	23.61 մ^2
3	Խոհանոց	12.38 մ^2
4	Ննջասենյակ	14.96 մ^2
5	Ննջասենյակ	15.24 մ^2
6	Ննջասենյակ	15.23 մ^2
7	Սանհանգույց	2.78 մ^2
8	Սանհանգույց	3.92 մ^2
9	Պատշգամբ	3.42 մ^2
10	Պատշգամբ	3.42 մ^2
11	Պատշգամբ	3.2 մ^2